Շուշանիկ Կուրղինյան

Ես ձեզ խղճում եմ

Խղճում եմ ես ձեզ, բթամիտ կանայք.
Որ արդ ու զարդի հետևից ընկած,
Թրև եք գալիս միշտ աննպատակ,
Լպիրշ վաճառքի դեմքերդ՝ կոկած:

Որ ամեն հնար դուք գործ եք ածում
Միշտ արուների հաճույքը շոյել.
Եվ գիշեր ցերեկ միայն մտածում
Խանդոտ դավերի որոգայթ լարել:

Որ կողոպտում եք դառը վաստակի
Վերջին կոպեկը ձեզ սիրող մարդու.
Չեղած ժամանակ անսիրտ անհոգի
Կեղծ զոհ ձևացած լալիս որպես բու:

Որ ունեք բնազդ նուրբ առուտուրի՝
Կարելիին չափ թանկ եք ծախում ձեզ.
Անվերջ պայքարով լոկ հրապույրի
Հագուստի մրցման շինում եք կրկես:

Խղճում եմ ես ձեզ՝ շվայտ գերիներ,
Միտք<ը> թավիշի ծալքերում կորցրած.
Որ ուղեղ ունեք, բայց չկան մտքեր,

Որ սրտեր ունեք կեղծիքով ներկած . . .

1907 թ . 21 մայիսի